

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2017 թ. փետրվարի 17-ի թիվ 9 որոշմամբ

ՌԵԿՏՈՐ

Ա.Ռ. ԴԱՐԲԻՆՅԱՆ



**Հայ-Ռուսական համալսարանի
բակալավրի կրթական ծրագրերով հայկական բաժանմունքի
2017-2018 ուսումնական տարվա
ընդունելության կանոնակարգ**

1. Հայ-Ռուսական համալսարանի (այսուհետ՝ ՀՌՀ) հայկական բաժանմունքում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքով (վճարովի) տեղերի համար բակալավրի որակավորում ստանալու համար 2017-2018 ուսումնական տարում ըստ մասնագիտությունների հաստատվել են ընդունելության հետևյալ քննությունները.

Ծածկագիր	Բուհը, մասնագիտությունը	Ընդունելության քննությունները			
		մրցութային			ոչ մրցութային
1	2	3	4	5	6
Հայկական բաժանմունք					
061101.02.6	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)		Հլգ(գ)*
056802.01.6	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	Մ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)	Հլգ(գ)	
031101.01.6	Տնտեսագիտություն	Մ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(տ)	Հլգ(գ)	
041301.01.6	Կառավարում	Մ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)	Հլգ(գ)	
041201.01.6	Ֆինանսներ	Մ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)	Հլգ(գ)	
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում	Մ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)	Հլգ(գ)	
041401.01.6	Շուկայագիտություն (մարքեթինգ)	Մ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)	Հլգ(գ)	
101501.01.6	Զբոսաշրջություն	Ա(գ) կամ ՀԺՊ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)	Հլգ(գ)	
042101.00.6	Իրավագիտություն	ՀԺՊ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)	Հլգ(գ)	

031201.01.6	Քաղաքագիտություն	ՀԺՊ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)	Հլգ(գ)	
031801.01.6	Միջազգային հարաբերություններ	ՀԺՊ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)	Հլգ(գ)	
023201.02.6	Միջմշակութային հաղորդակցություն /Անգլերեն լեզու/	Անգլ(բ)	Անգլ(գ)	Հլգ(գ)	
032101.01.6	Լրագրություն	Հլգ(գ)	ՍԱ(գ)	ԲՀՄ(բ)	
022801.02.6	Թյուրքագիտություն	ՀԺՊ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)	Հլգ(գ)	
022801.03.6	Իրանագիտություն	ՀԺՊ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)	Հլգ(գ)	

2. Ընդունելության մրցույթն անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող ընդունելության կարգի:

3. ՀՌՀ-ի բակալավրիատում ուսամնառությունն իրականացվում է հայոց լեզվով (ըստ ՀՀ և ՀՌՀ չափորոշիչների) ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ:

4. ՀՌՀ-ի բակալավրիատի շրջանավարտներին հանձնվում է ՀՀ պետական նմուշի դիպլոմ:

5. Վճարովի ուսուցման համակարգ ընդունվածները հրամանագրվում են վճարովի ուսուցման ծառայությունների մասին պայմանագիրը կնքելուց և առաջին կիսամյակի համար վճարումը կատարելուց հետո: Վճարովի ուսուցման ծառայությունների մասին պայմանագիրը կնքելու վերջնաժամկետն է 31.08.2017թ.: